**ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**
**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/2-2»**

ք. Երևան «25» հունվարի 2018թ.

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Ա. Տանանյան-ի, որը գործում է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայկարի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Հովսեփյանի, որը գործում է —————— կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրության աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 618010 (վեց հարյուր տասնութ հազար տաս) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Ֆանարջյան 76 շ. | «Հայկարլի» ՍՊԸ |
| <<Արդշինբանկ >> ՓԲԸ Արաբկիր մ/ճ | Ք. Երևան, Կիևյան 18/6 |
| Հ/Հ 2471202012460000 | Հ/Հ 16072018658600 |
| ՀՎՀՀ01002804 | ՀՎՀՀ 00253353 |
| էլ. հասցեն՝ nco.gnumner@gmail.com | էլ. Հասցեն՝ haykarli@mail.ru |
| հեռ. 010-28-77-92 | Հեռ. 091 20 61 15 |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
«25» հունվարի 2018թ. կնքված
ՈՒԱԿ-ԳՀԱԾՁԲ-18/2-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Աշխատանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական նկարագրություն | | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | անվանումը | բնութագիրը | | | | | հասցեն | ժամկետը** |
| 7 | 79821180 | Ելքի դրամարկղային օրդեր | Ելքի դրամարկղային օրդեր, A5 օֆսեթ, 70գ.մ/բ, 1+0 | հատ | 8 | 4000 | 500 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 9 | 79821180 | Վերակենդանացման բաժնի հսկողության թերթիկ | Վերակենդանացման բաժնի հսկողության թերթիկ, A4 օֆսեթ, 70գ.մ/բ, 1+1 | հատ | 3,6 | 10800 | 3000 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 10 | 79821180 | Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր | Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր A3 օֆսեթ, 70գ.մ/բ, 1+0 | հատ | 8,5 | 4250 | 500 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 15 | 79821180 | Արյան ընդհանուր քննության թերթիկ | Արյան ընդհանուր քննության թերթիկ A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+1 | հատ | 1,95 | 5850 | 3000 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 18 | 79821180 | Արյան բաղադրամասերի պահանջագիր | Արյան բաղադրամասերի պահանջագիր A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+0 | հատ | 20 | 2000 | 100 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 26 | 79821180 | Պահանջագիր | Պահանջագիր A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+1 | հատ | 4 | 2000 | 500 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 28 | 79821180 | Բժշկական պարագաների ակտ | Բժշկական պարագաների ակտ A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+0 | հատ | 2,5 | 2500 | 1000 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 29 | 79821180 | Դեղորայքի հաշվետվություն | Դեղորայքի հաշվետվություն A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+1 | հատ | 4,7 | 4700 | 1000 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 30 | 79821180 | Դոնորական արյան հետազոտության ուղեգիր | Դոնորական արյան հետազոտության ուղեգիր A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+0 | հատ | 5 | 2500 | 500 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 31 | 79821180 | Պահեստի մուտքի ֆակտուրա | Պահեստի մուտքի ֆակտուրա A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+0 | հատ | 4 | 2000 | 500 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 32 | 79821180 | Դոնորների հաշվառման մատյան | Դոնորների հաշվառման մատյան A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+1, 100 թերթ, կազմը ստվարաթղթե 1500գ. մ/բ, բոլվիլինապատ, թելակար կնիքով համարակալման համար, թերթիկը որը փակցված է թելի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող խսկ թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 2500 | 5000 | 2 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 33 | 79821180 | Արյան հանձնման տեղեկանք | Արյան հանձնման տեղեկանք A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+0 | հատ | 4 | 2400 | 600 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 34 | 79821180 | Բակտերիոլոգիական թերթիկ՝ հակասնկային | Բակտերիոլոգիական թերթիկ հակասնկային A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+0 | հատ | 20 | 2000 | 100 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 35 | 79821180 | Մեծորիայ օրդեր մեծ | Մեծորիայ օրդեր մեծ A3 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+0 | հատ | 15 | 3000 | 200 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 36 | 79821180 | Մեծորիայ օրդեր փոքր | Մեծորիայ օրդեր փոքր A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+1 | հատ | 15 | 2250 | 150 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 41 | 79821180 | Արյան 3-րդ խմբի պիտակ | Արյան 3-րդ խմբի պիտակ, 15*10սմ, խտությունը 70գ. մ/բ, 1+0 | հատ | 7 | 2100 | 300 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 42 | 79821180 | Արյան 2-րդ խմբի պիտակ | Արյան 2-րդ խմբի պիտակ, 15*10սմ, խտությունը 70գ. մ/բ, 1+0 | հատ | 4 | 2400 | 600 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 43 | 79821180 | Արյան 1-ին խմբի պիտակ | Արյան 1-ին խմբի պիտակ, 15*10սմ, խտությունը 70գ. մ/բ, 1+0 | հատ | 4 | 2000 | 500 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 45 | 79821180 | Գիրք գրասենյակային տողանի | Գիրք գրասենյակային տողանի, A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+1, 100 թերթ, կազմը ստվարաթղթե 1500գ. մ/բ., բոլվիլինապատ, թելակար կնիքով հաստատման համար, թերթիկը որը փակցված է թեկի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող խև թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 2500 | 7500 | 3 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 46 | 79821180 | Օնկոմարկերների և հորմոնների թերթիկ | Օնկոմարկերների և հորմոնների թերթիկ A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+1 | հատ | 4,5 | 6750 | 1500 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 47 | 79821180 | Օնկոմարկերների և հորմոնների պատասխանի թերթիկ | Օնկոմարկերների և հորմոնների պատասխանի թերթիկ A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 4+0 | հատ | 3,5 | 35000 | 10000 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 48 | 79821180 | Գիրք սեռոլոգիկական անալիզների համար | Գիրք սեռոլոգիկական անալիզների համար, A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+1, 100 թերթ, կազմը ստվարաթղթե 1500գ. մ/բ, բոլվիլինապատ, թելակար կնիքով հաստատման համար, թերթիկը որը փակցված է թեկի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող խև թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 1950 | 7800 | 4 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 49 | 79821180 | Սեռոլոգիական անալիզի թերթիկ | Սեռոլոգիական անալիզի թերթիկ, A4,խտությունը 70գ. մ/բ, 4+0 | հատ | 6,9 | 41400 | 6000 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 50 | 79821180 | Մասյան անաշխատունակության թերթիկների հաշվառման | Մասյան անաշխատունակության թերթիկների հաշվառման A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+1, 170 թերթ, կազմը ստվարաթղթե 1500գ. մ/բ, բոլվիլինապատ, թելակար կնիքով հաստատման համար, թերթիկը որը փակցված է թեկի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող խև թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 2500 | 5000 | 2 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 51 | 79821180 | Գիրք գրասենյակային, տողանի | Գիրք գրասենյակային, տողանի A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+1, 200 թերթ, կազմը՝ բոլվիլինապատ, ստվարաթղթե, առնվազն 1500գ. մ/բ, բոլվիլինապատ, թելակար կնիքով հաստատման համար, թերթիկը որը փակցված է թեկի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող խև թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 1750 | 96250 | 55 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 52 | 79821180 | Բաժանմունքների վիճակագրական հաշվետվությունների թերթիկ | Բաժանմունքների վիճակագրական հաշվետվությունների թերթիկ A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/բ, 1+1 | հատ | 8 | 2000 | 250 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 54 | 79821180 | Ուրեգիր բակտերիոլոգիական հետազոտության | Ուրեգիր բակտերիոլոգիական հետազոտության, A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+0 | հատ | 4 | 2000 | 500 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 55 | 79821180 | Բակտերիոլոգիական հետազոտության թերթիկ | Բակտերիոլոգիական հետազոտության թերթիկ, A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+0 | հատ | 5 | 3000 | 600 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 56 | 79821180 | Նարկոզի դեղորայքի ելքի-մուտքի գիրք | Նարկոզի դեղորայքի ելքի-մուտքի գիրք A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+1, 200 թերթ, կազմը՝ բոլվինիտապատ, ստվարաթղթե, առնվազն 1500գ. մ/ք. բոլվինիտապատ, թելակար կնիքով համապատասխան համար, թերթիկը որը փակցված է թելի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող իսկ թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 2500 | 5000 | 2 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 57 | 79821180 | Հոգեմետների ելքի-մուտքի գիրք | Հոգեմետների ելքի-մուտքի գիրք A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+1, 150 թերթ, կազմը՝ ստվարաթղթե 1500գ. մ/ք. բոլվինիտապատ, թելակար կնիքով համապատասխան համար, թերթիկը որը փակցված է թելի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող իսկ թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 1850 | 14800 | 8 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 58 | 79821180 | Հոգեմետների պահանջագիրք | Հոգեմետների պահանջագիրք 14.5*37.5սմ օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+0, 200 թերթ, կազմը՝ ստվարաթղթե 1500գ. մ/ք. բոլվինիտապատ, թելակար կնիքով համապատասխան համար, թերթիկը որը փակցված է թելի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող իսկ թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 4500 | 13500 | 3 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 59 | 79821180 | Նարկոտիկների դատարկ սրվակների հաշվառման գիրք | Նարկոտիկների դատարկ սրվակների հաշվառման գիրք A3 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+1, 100 թերթ, կազմը՝ ստվարաթղթե 1500գ. մ/ք. բոլվինիտապատ, թելակար կնիքով համապատասխան համար, թերթիկը որը փակցված է թելի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող իսկ թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 4000 | 32000 | 8 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 61 | 79821180 | Արյան հետազոտության թերթիկ էքսպրես լաբորատորիայի | Արյան հետազոտության թերթիկ էքսպրես լաբորատորիայի A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+0 | հատ | 1,95 | 9360 | 4800 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 62 | 79821180 | Արյան առաքման մատյան | Արյան առաքման մատյան A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+1, 100 թերթ, կազմը ստվարաթղթե 1500գ. մ/ք. բոլվինիտապատ, թելակար կնիքով համապատասխան համար, թերթիկը որը փակցված է թելի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող իսկ թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 2500 | 5000 | 2 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 63 | 79821180 | Հետվիրահատական հիվանդների գրանցման մատյան | Հետվիրահատական հիվանդների գրանցման մատյանA3 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+1, 200 թերթ, կազմը ստվարաթղթե 1500գ. մ/ք. բոլվինիտապատ, թելակար կնիքով համապատասխան համար, թերթիկը որը փակցված է թելի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող իսկ թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 6000 | 6000 | 1 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 64 | 79821180 | Անզգայացումների գրանցման մատյան - | Անզգայացումների գրանցման մատյանA3 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+1, 200 թերթ, կազմը ստվարաթղթե 1500գ. մ/ք. բոլվինիտապատ, թելակար կնիքով համապատասխան համար, թերթիկը որը փակցված է թելի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող իսկ թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 6000 | 6000 | 1 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 65 | 79821180 | Առաջնային այցելությունների մատյան | Առաջնային այցելությունների մատյան A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+1, 400 թերթ, կազմը ստվարաթղթե 1500գ. մ/ք. բոլվինիտապատ, թելակար կնիքով համապատասխան համար, թերթիկը որը փակցված է թելի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող իսկ թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 3500 | 14000 | 4 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 66 | 79821180 | Կրկնակի այցելությունների մատյան | Կրկնակի այցելությունների մատյան A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք. 1+1, 400 թերթ, կազմը ստվարաթղթե 1500գ. մ/ք. բոլվինիտապատ, թելակար կնիքով համապատասխան համար, թերթիկը որը փակցված է թելի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող իսկ թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 3500 | 14000 | 4 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 67 | 79821180 | Համաձայնագիր վճարովի ծառայության մատուցման | Համաձայնագիր վճարովի ծառայության մատուցման A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/թ. 1+0 | հատ | 4,5 | 9000 | 2000 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 68 | 79821180 | Սերոլոգիական բոքսի թերթիկ | Սերոլոգիական բոքսի թերթիկ A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/թ. 1+1 | հատ | 4,5 | 9000 | 2000 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 69 | 79821180 | Բժիշկների հերթափոխությունների մատյան | Բժիշկների հերթափոխությունների մատյան A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/թ. 1+1, 200 թերթ, կազմը ստվարաթղթե 1500գ. մ/թ. բոլվիֆինապատ, թելակար կնիքով հաստատման համար, թերթիկը որը փակցված է թեփի վրա պետք է լինի տողանի՝ առնվազն ինը տող խև թերթիկի չափսը 10*10սմ | հատ | 1950 | 7800 | 4 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 70 | 79821180 | Արյան 4-րդ խմբի պիտակ | Արյան 4-րդ խմբի պիտակ, 15*10սմ, խտությունը 70գ. մ/թ. 1+0 | հատ | 7 | 2100 | 300 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 73 | 79821180 | Թղթապանակ գրպանիկով, ֆոտոբորտ | Թղթապանակ գրպանիկով, ֆոտոբորտ 350գր/ 310*220մմ պատրաստի տեքստով , գունավոր (4+4) ,մեջը գրպանիկ գունավոր (4+0)։Գրպանիկի չափսը՝ (10*19), թղթեր դնելու համար, մեջտեղից ծալքով(беговка),տպագրության տեսակը օֆսեթ։ | հատ | 190 | 95000 | 500 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 74 | 79821180 | Թղթապանակ գրպանիկով, ֆոտոբորտ | Թղթապանակ գրպանիկով, ֆոտոբորտ 350գր/ 310*220մմ պատրաստի տեքստով , գունավոր (4+4) ,մեջը գրպանիկ գունավոր (4+0)։Գրպանիկի չափսը՝ (10*19), թղթեր դնելու համար, մեջտեղից ծալքով(беговка),տպագրության տեսակը օֆսեթ։ | հատ | 210 | 63000 | 300 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| 75 | 79821180 | Թղթապանակ գրպանիկով, ֆոտոբորտ | Թղթապանակ գրպանիկով, ֆոտոբորտ 350գր/ 310*220մմ պատրաստի տեքստով , գունավոր (4+4) ,մեջը գրպանիկ գունավոր (4+0)։Գրպանիկի չափսը՝ (10*19), թղթեր դնելու համար, մեջտեղից ծալքով(беговка),տպագրության տեսակը օֆսեթ։ | հատ | 220 | 44000 | 200 | տես սույն հավելվածի ծանոթությունը | տես սույն հավելվածի ծանոթությունը |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | X | 618010 | X | X | |

Մատակարարման հասցեն է՝ ք. Երևան Ֆանարջյան 76շ <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ: Աշխատանքների կատարումը և դրանց մատակարարումը Կատարողի կողմից իրականացվում է սույն Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալու պահից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ Պատվիրատուի պատվիրված քանակին և տեսակին համապատասխան: Աշխատանքների կատարման և մատակարարման համար պատվերը Պատվիրատուի կողմից Կատարողին կատարվում է բանավոր, կամ գրավոր ձևով Պայմանագրում նշված Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեից պատվերը ուղարկելով Կատարողի էլեկտրոնային փոստի հասցեին: Ձևաթղթերի նմուշները տրամադրում է պատվիրատուն:

* աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա պտեսվում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ք. Երևան, Ֆանարջյան 76 շ
<<Արոշինբանկ >> ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 2471202012460000
ՀՎՀՀ01002804
էլ. հասցե. nco.gnumner@gmail.com
հեռ. 010-28-37-92

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
ք. Երևան, Գինյան 18/6
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, թիվ 3 մ/ճ
Հ/Հ 16070018658600
ՀՎՀՀ 00253353
էլ. հասցե. baykar@mail.ru
հեռ. (091)206115

/ստորագրություն/
Կ.Տ.